ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2016 թվական N 23-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Գույք նվիրաբերելու մասին» N 1416-Ա որոշումը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2398445) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի N 64 հասցեում գտնվող շենքը և շինությունները՝ համաձայն հավելվածի, և դրանցով զբաղեցված, սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ՝ 08-001-0548-0002 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի հողերի հասարակական գործառնական նշանակությամբ 0,3 (զրո ամբողջ երեք տասնորդական) հեկտար մակերեսով հողամասը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքի պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել Գյումրի համայնքի միջոցների հաշվին:

Կողմ (13) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Ա.Գրիգորյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ՔԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» փետրվարի 2016 թ.

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2016 թվականի
փետրվարի 04- ի N 23-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ Ա ՓՈՂՈՑ N 64 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	Գույքի տեսակը	Մակերեսը (քառ.մետր)
1.	Շենք (վարչական)	351.17
2.	Ավտոտնակ	19.4
3.	Ավտոտնակ	34.8
4.	Ավտոտնակ	39.4
5.	Պարիսպ	20.0

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2016 թվական N 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 206-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ալեք Մանուկյան փողոց N 1 հասցեի հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N 206-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

«0,2777285 (զրո ամբողջ երկու միլիոն յոթ հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր ութսունհինգ տասմիլիոներորդական)» թիվը և բառերը փոխարինել «0,277285 (զրո ամբողջ երկու հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր ութսունհինգ միլիոներորդական)» թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (13)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան		
Ա. Բաղրամյան		
Ա.Գրիգորյան		
Հ. Խաչատրյան		
Հ. Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ. Հունանյան		
Ն. Մեսրոպյան		
Ռ.Մխիթարյան		

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» փետրվարի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2016 թվական N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑ N 10/1 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ (ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից Գյումրի քաղաքի Լալայան փողոց N 10/1 հասցեի, առանց համապատասխան ձևակերպումների կառուցված շենք-շինությունները, որպես համայնքի սեփականություն, ենթարկվել են պետական գրանցման (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08122015-08-0044):

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը դիմել է շինությունները և դրանց կառուցման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը սեփականության իրավունքով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին) անհատույց տրամադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1.2.-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման ու տնօրինման կարգը հաստատելու մասին» № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.1 կետի և հիմք ընդունելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2015 թվականի նոյեմբերի 5-ին N 14436 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Լալայան փողոց N 10/1հասցեի 149.89 (մեկ հարյուր քառասունինն ամբողջ ութսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շենք-շինությունները և դրանց կառուցման ու սպասարկման համար զբաղեցրած 321.20 (երեք հարյուր քսանմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին):
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի) միջոցների հաշվին:

Կողմ (13) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Գ. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Ա.Գրիգորյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» փետրվարի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2016 թվական N 26–Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇՉԵՐԲԻՆԱՅԻ ՓՈՂՈՑ N 23/2 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և նկատի ունենալով, որ նշված գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 25012016-08-0019) Շչերբինայի փողոց N 23/2 հասցեի 63,04 (վաթսուներեք ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ինքնակամ կառուցված անավարտ բնակելի տունը և դրա կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցված, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակությամբ 0,044175 (զրո ամբողջ քառասունչորս հազար հարյուր յոթանասունհինգ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը մրցութով տրամադրել վարձակալության՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ տունը լրակառուցելու և ըստ նպատակային նշանակության օգտագործելու պայմանով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել տարեկան՝ 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

	Կողմ (13)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Ա.Գրիգորյան			
Հ. Խաչատրյան			
Հ. Կարապետյան			
Տ.Հովհաննիսյան			
Վ. Հունանյան			

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» փետրվարի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2016 թվական N 27-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 26/7 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից ներկայացված հողամասի ելակետային տվյալները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Վազգեն Սարգսյան փողոց N 26/7 հասցեի 0,110438 (զրո ամբողջ հարյուր տաս հազար չորս հարյուր երեսունութ միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 80000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

	Կողմ (13)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Ա.Գրիգորյան			
Հ. Խաչատրյան			
Հ. Կարապետյան			
Տ.Հովհաննիսյան			
Վ. Հունանյան			

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» փետրվարի 2016 թ.